

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Սույնով ես՝ _____-ը (անձը հաստատող փաստաթուղթ՝ -----, տրված // թ.-ին, -----ի կողմից), տալիս եմ իմ համաձայնությունն առ այն, որ՝

«ԱՅՈ» ՈւՎԿ ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Կազմակերպություն), կրեդիտավորման և այլ պայմանագրեր կազմելու, իմ կրեդիտավորվելու (Կազմակերպությունից ֆինանսավորում ստանալու) հնարավորությունները Կազմակերպության կամ իմ նախաձեռնությամբ ստուգելու և կրեդիտավորման/ վարկավորման, Վարկի/կրեդիտի կամ այլ ֆինանսավորման տրամադրման հայտի դիտարկման նպատակով, Կազմակերպությունում վճարային պարտավորություններ ստանձնելովունենալու նպատակով, ինչպես նաև Կազմակերպությունում երրորդ անձի անձանց պարտավորություններ ստանձնելու նպատակով որպես երաշխավոր, համավարկառու, գրավատու լինելու, այդ թվում նաև, բայց չսահմանափակվելով՝ նախկինում իմ մասին ստացված վարկային զեկույցի տեղեկատվությունը թարմացնելու, նպատակներով առանց ինձ նախապես կամ լրացուցիչ տեղեկացնելու Կազմակերպությունը հարցումներ կատարի և ստանա տեղեկություններ «ԱՔՌԱ ՔՐԵԴԻՏ ՌԵՓՈՐԹԻՆԳ» ՓԲԸ-ից իմ ներկա և անցյալ ֆինանսական/դրամական պարտավորությունների վերաբերյալ:

«ԱՔՌԱ ՔՐԵԴԻՏ ՌԵՓՈՐԹԻՆԳ» ՓԲԸ-ն Կազմակերպությանը տրամադրի իմ ներկա և անցյալ ֆինանսական պարտավորություններ վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև այլ տեղեկություններ, որոնք Կազմակերպության կողմից կարող են հաշվի առնվել ինձ հետ վարկային, փոխառության, երաշխավորության, գրավի և այլ պայմանագիր կնքելու և/կամ մարքեթինգային և/կամ այլ ծառայությունների առաջարկներ ներկայացնելու վերաբերյալ որոշում կայացնելիս:

Կազմակերպության հետ վարկային, փոխառության, կրեդիտավորման, երաշխավորության, գրավի և այլ պայմանագիր կնքելու դեպքում տվյալ պայմանագրի գործողության ողջ ընթացքում ցանկացած պահին, առանց ինձ նախապես տեղյակ պահելու, իմ գործող կրեդիտի/վարկի և այլ ֆինանսավորման պայմանագրերի շրջանակում վերլուծության (մոնիթորինգի) նպատակով և/կամ մարքեթինգային և/կամ այլ ծառայությունների առաջարկներ ներկայացնելու նպատակով «ԱՔՌԱ ՔՐԵԴԻՏ ՌԵՓՈՐԹԻՆԳ» ՓԲԸ-ն Կազմակերպությանը տրամադրի իմ ապագա ֆինանսական/դրամական պարտավորությունների վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև Կազմակերպությանը անհրաժեշտ այլ տվյալներ:

Սույնով հավաստում եմ նաև, որ նախքան սույն համաձայնության տալը, ինձ մանրամասն բացատրվել է և ծանոթացել եմ վարկային պատմության և վարկային սքոր գնահատականի էության և դրա կարևորության, կիրառվող սքոր տեսակի, սքորի վրա ազդող գործոնների մասին և տալիս եմ իմ համաձայնությունը նաև առ այն, որ Կազմակերպությունը կատարի հարցումներ և ստանա տեղեկություններ «ԱՔՌԱ ՔՐԵԴԻՏ ՌԵՓՈՐԹԻՆԳ» ՓԲԸ-ից և «ԱՔՌԱ ՔՐԵԴԻՏ ՌԵՓՈՐԹԻՆԳ» ՓԲԸ-ն Կազմակերպությանը տրամադրի իմ ներկա, անցյալ և ապագա ֆինանսական դրամական պարտավորությունների, ինչպես նաև Կազմակերպությանը անհրաժեշտ այլ տեղեկություններ, ինչպես նաև՝ տեղեկացված եմ, որ

«ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորդինգ» ՓԲԸ-ին ստորև աղյուսակում նկարագրված հարցումները կարող են ազդեցություն ունենալ իմ սքոր գնահատականի վրա՝

Հարցման նպատակը	Ազդեցություն սքոր գնահատականի վրա	Հարցման հաճախականությունը	Ժամկետ
Նոր վարկի/կրեդիտի կամ այլ ֆինանսավորման տրամադրման հայտ	Նվազում է	Մեկանգամյա	Նոր վարկի տրամադրման հայտի դիտարկման ողջ ընթացքում
Կազմակերպությունում երրորդ անձի/անձանց պարտավորություններ ստանձնելու նպատակով որպես երաշխավոր հանդես գալու հայտ	Նվազում է	Մեկանգամյա	Երաշխավոր հանդես գալու հայտի դիտարկման ողջ ընթացքում
Գործող կրեդիտի/վարկի և այլ ֆինանսավորման պայմանագրերի շրջանակում վերլուծություն (մոնիթորինգ)	Չի ազդում	Պարբերաբար, ըստ անհրաժեշտության և առանց քանակային սահմանափակման	Կրեդիտի/վարկի ֆինանսավորման պայմանագրերի գործողության ժամանակահատվածում
Մարքեթինգային և/կամ այլ ծառայությունների առաջարկներ	Չի ազդում	Պարբերաբար, ըստ անհրաժեշտության և առանց քանակային սահմանափակման	Կազմակերպությունում գործող մարքեթինգային և/կամ այլ ծառայությունների պայմանագրերի գործողության ժամանակահատվածում

Հարցում կատարելու համաձայնությունը պարտադիր է Վարկի/կրեդիտի կամ այլ ֆինանսավորման տրամադրման հայտի դիտարկման և գործող կրեդիտի/վարկի և այլ ֆինանսավորման պայմանագրերի շրջանակում վերլուծության (մոնիթորինգի) իրականացման համար:

Սույն համաձայնությամբ տրվող համաձայնությունը վերաբերում է նաև իմ և Կազմակերպության միջև պայմանագրային հարաբերությունների շրջանակներում՝ Կազմակերպության հետ կնքված պայմանագրերից բխող գործողությունների իրականացման նպատակով մշակել (ներառյալ՝ հավաքել, ամրագրել և օգտագործել), իմ

անձնական տվյալները: Այդ նպատակով սույնով տալիս եմ իմ անվերապահ համաձայնությունը, որ պետական, տեղական ինքնակառավարման մարմիններին կազմակերպություններին (այդ թվում՝ հետևյալ պետական մարմիններում իմ վերաբերյալ առկա և տվյալները՝ ՀՀ Ոստիկանության բնակչության պետական ռեգիստր, ՀՀ Ոստիկանության ճանապարհային ոստիկանություն, ՀՀ ԱՆ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն, ՀՀ ԱՆ Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալություն, «Հարկադիր կատարման ծառայություն, ՀՀ Պետական եկամուտների կոմիտե, «Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգ տրոն հիմնադրամ, «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ), և այլ անձան համակարգերին հարցում ուղարկվի իմ անձնական տվյալների մասին և որ հարցմանն ի պատասխան մշակողների՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների կողմից իմ ցանկացած անձնական տվյալը փոխանցվի ԱՅՈՒՄ ՈւՎԿ ՓԲԸ-ին:

Սույն դաշտում նշում կատարելով ես հրաժարվում եմ՝

Ոչ պարտադիր հարցումների տեսակներից	
------------------------------------	--

Հարցման անձնական տվյալները պահպանվելու են 99 (իննսունինը) տարի ժամկետով՝ առանց փոխանցվելու երրորդ անձի:

Տեղեկացված եմ, որ օրենքով նախատեսված դեպքերում ու կարգով կարող եմ պահանջել դրանց ուղղում կամ ոչնչացում, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ:

Միաժամանակ տալիս եմ համաձայնություն, որպեսզի Կազմակերպությանը փոխանցի իմ դրամական պարտավորությունների մասին իր ունեցած տեղեկատվությունը ՀՀ ԿԲ Վարկային Ռեգիստր և/կամ «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ:

Անուն, հայրանուն, ազգանուն

ստորագրություն

ամսաթիվ